Union City

# Diocese of the Armenian Church of America

314 East 35th Street, New York 16, N. Y.

MUrray Hill 6-0710

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԱՄԵՐԻԿԱՅԻ

Թիւ 104
Փետրուար 25, 1959

Հոգեշնորհ
Տ. Վաչէ Վրդ. Յովսէփեան
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ս. Խաչ Եկեղեցւոյ
Եունիըն Սիթի.

Սիրելի Հայր Վաչէ.

Ստացած ենք Փետրուար 24 թուակիր Ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ Ձեր Նախագահութեամբ գումարուած Ծխական ժողովին մէջ ընտրըուած են Ծխական Խորհուրդի անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը։

Նկատի ունենալով որ վերոյիշեալները ընտրուած են օրինաւորապէս եւ իբրեւ եկեղեցւոյդ անդամներ կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը՝ հետեւեալ կարգով.-

Տիարք՝ Նշան Ոսկեան
Հէրրի Պէնտեան
Նուպար Տօրեան
Նշան Սթամպօլեան

Կօրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք Ձեզի եւ պատուարժան Ծխական Խորհուրդիդ համար համախոհ եւ բեղմնաւոր գործունէութիւն ի պայծառութիւն Հայց. Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր սիրեցեալ ժողովուրդին։

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի